վասն զի իրենց ուսպուլթիւնը չէ որ պիտի ընտրուի ազգէն, հապա իրենց տաղանդը, իրենց յաջողակութիւնը և իրենց սկզբունքը»:

---

## ՕՐԱՑՈՒՑԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Մեր դժբաղդութենէն մեր ազգային յառաջադիմութեան հորիզոնը տակաւին այնքան առհմանափակ է, որ օրացուցական խնդիրներն անգամ՝ հրապարակաւ քննուելու չափ կարեւորութիւն ունին։ Այս դժպատեհ կարեւորութիւնն է, որ կ'ըստիպէ զմեզ դիտողութեան առնուլ օրացուցական խնդիր մի, որոյ շարժառիթը Տէր Ներսէս քահանայի հետեւեալ գրութիւններն են, այն է Պայմանագիր օրացուցական ուսման, Նամակ գոհունակութեան առ Ս. Պատրիարքն որոյ Աթոռոյս և Թուղթ շնորհակալութեան։

Պայմանագիր — Զօրութիւն գրոյս այս է, որ ես ստորագրեալս ըստ խնդրանաց Նորընտիր Առաքելաշնորհ Պատրիարքի որոյ քաղաքիս Երուսաղէմի Տ. Տ. Եսայեայ սրբազան Արք Եպիսկոպոսի՝ խոստանամ անթերի ուսուցանել Մահտեսի Պարոն Յարութիւն աշակերտի նորին պիտանացոյ ուսմանս ՝ի յօրինել զտարեկան օրացոյցն ազգային միայն ՝ի սուրբ քաղաքիս Երուսաղէմի. և այս աշխատութիւն հինգ հարիւր դահեկանի սակարկութեամբ. և զոր ուսնիմ անպակաս ուսուցանել, են այսոքիկ։

Մուտք արեգական յերկոտասան կենդանակերպսն՝ ժամու և րոպէիւ.

Գտանել զժամանակ ծննդեան և լման լուսնի, և առաջին և վերջին քառորդաց.

Գտանել զտեղիս արեգական և լուսնի, թէ յոր կենդանակերպի և յորում աստիճանի իցէ.

Ճանաչել զհեռաւորութիւն արեգական և լուսնի ՝ի միմեանց յո և իցէ ժամանակի.

Գտանել զժամանակ խաւարման լուսնի և արեգական և զքանութիւն մասանց նորին.

Գուշակութիւնք օդոց յերկոտասան ամիսս տարւոյն.

Գտանել զտարեմուտս և զամսամուտս Աղարիկայի փոքր թուականին Հայոց.

Գտանել զտարեմուտս և զամսամուտս տաճկաց և հրէից.

Շարժական և անշարժ տօնք և աւուրք Յունաց և Լատինացւոց.

Գտանել զաւուրս կրօնական տօնից տաճկաց և հրէից.

Գտանել զտարեմուտս և զամսամուտս հրէից.

Տեղեկանալ կանոնաց և հաշուոց տօմարական գիտութեանց իւրաքանչիւր Ազգաց.

Գիտել զժամ ծագման արեգական, և զկէս միջօրէի, և զպաշտաման իւրաքանչիւր աւուր.

Գտանել զշրջանս հինգ հարիւրեկին, և զքանորդս նորին ՝ի միջոցի 532 ամաց.

Տեղեկանալ շրջանաց արեգական և լուսնի, և զայն ամենայն, որք կարեւորք են ՝ի յօրինել զտարեկան օրացոյցն համազգային։

Եւ զայս վերոգրեալ զամենայն ուսմունս վասն անթերի և անպակաս ուսուցանելոյ տամ զայս գիր ՝ի ժամանակի կարեւորութեան վկայել։

| | |
|---|---|
| 1865 | Տէր Ներսէս քահանայ սորին |
| Մարտ 17 | Սուքիասեան Էջմիածնոյ |
| | Խաչկեան. |

Նամակ գոհունակութեան — Հրեշտակական վարուց մաքրութեամբ արժանացեալ Ծայրագոյն Շնորհաց հովուին Աստուծոյ Տ. և Տ. Եսայեայ Արհիապատիւ Եպիսկոպոսի և արժանաւորագոյն Պատրիարքի աստուածային Աթոռոյն որոյ Երուսաղէմի երկնաշուք զարդարելոյն սրբութեան ամենայն խոնարհութեամբ համբոյր մատուցանեմ։

Գոհանամք հանապազ զամենախնամ տեսչութենէ բարեխնամ մատանց աջոյն անեղի, որ գերագոյն նախախնամութեամբ հրաշակերտեաց զպանծալին աթեղերաց զզօնգ լուսաձեւ, որ արդարեւ վերամբարձեալ փառօք քան զաստեղազարդ կամարս երկնից, լուսափայլ ծաւալէ զճառագայթ շնորհաց իւրոց ընդ ոլորտս տիեզերաց. և զոր ինչ մի առատաշնորհ ծաւալեալ Հայր մեր հոգեւոր՝ իբրեւ զարեգակն պայծառացեալ ջամբէր առատութեամբ զոր ՝ի վերուստ ընկալեալ զշնորհաց ձիրս պարգեւաց. Ցորոյ և իմ ՝ի գոլորտն իմում ՝ի վայելել այդր նոր նորոգեցայ ՝ի հոգի և ՝ի մարմին, և առաւել քան զանարժանութիւնս իմ գտի ընդունելութիւն ՝ի քումմէ բարերարութենէ և երախտագէտ միով խոստովանիմ զքոյդ մարդասիրութիւն յամենայն ժամ, ոչ միայն բանիւ բերանոյ այլ սրտիւ և հոգւով, վասնորոյ պարտական զանձն համարեցայ անխափանաբար նուիրել միաբանութեան Սրբոյ Աթոռոյդ զուսմունս տօմարական գիտութեան, և առ այս վերաբերեալ զաստեղաբաշխական հաշիւս և այժմ սովին պիտակ քարտէզիւս խնդրեմ ՝ի վեհափառութենէ ձերմէ, զի զայս նուէր մեր և զուղղութեամբ քեայ աշխատութիւն ՝ի մատենի արձանագրութեան որոշակի նշանակել բարեհաճեսջիք. և ուսմանց եկեղեցականք հանեսցին զմեզ յիշատակել ՝ի ժամ մատուցման սուրբ պատարագի, և խնդրել քաւութիւն յանցանաց մերոց։

Ընդ գրոյս ՝ի նուէր միաբանութեան սրբոյ Աթոռոյդ առաքեցի քսան հատ յինէն յօրինեալ՝

digitised by A.R.A.R.@

Լուսաւորութեան ամենայնական վերակացող անուա-նեալ ուսուցիչ․ զոր ընկալեալ տպեալ, որոց պէտքն է․ Ողջ էր ՚ի վերայ բարձու իշխանութեան քո եւս քան զեւս բարգաւաճեալ փառօք ՚ի պայծա-ռութիւն սրբոյ Աթոռոյդ և ՚ի պարծանս համօ-րէն ազգիս․

Մշտամ հնազանդ ծառայ Ն․ Երեմիա
քահանայ սուրբ Սիմէօննոս Եկե-
ղեցւոյ խոստովանիչ․

1860
Օգոս 21

Թուղթ գաղափարաբանեան —Առաքելաշնորհ Սրբազան Պատրիարք բարեխնամ սուրբ Հայր․

Անկէ յառաջ առ ձեզ գրած նամակաւս երես ՚ի գետին բառերով աղաչեցի զձեզ, ներ-կայ տարւոյս օրացոյցը չը տպել, և եթէ տը-պած էք ալ նէ, գոնէ վաճառելու համար ՚ի Պոլիս չը ղրկել, նոյն տարուան ձեր պատճա-ռաւ տասն հազար ղուրուշ առած պարտքս վը-ճարելու նպատակաւ, և տատ Պոլսոյ տպա-գիրներուն տպելոյ արտօնութիւն չը տալով․ և մեծ գումար ծախք ընելով տպագիր պիտոյիցը չափ իմ հաշուիս տպել տուած ըլլալս իմացուցի, և որ տպարան տպելու ըլլայ նէ, իմ վնասս ան-կեց պահանջելու համար դատ վարելս գրով ձեզ իմացուցի, բայց նոյն աղաչանքս ձեզի անլսելի ըլ-լալով, և այս իրաւունքս երեւակայական իրա-ւունք մը համարելով, դարձեալ Պոլիս ղրկեցիք վաճառելու այդքան հազար օրացոյց, որով մեր վը-նասը կրկնապատկեցիք հայրական գթութեամբ ձեր, այս կը մնայ մեզի հիմա մեր խոստմանը համեմատ թէ ազգային և թէ կառավարութեան ատեաններու մէջ դատաստանական օրինօք իրաւուն-քըս և վնասս ձեզմէ պահանջել․ Ուստի այս գը-րութեամբս կը խնդրեմ ձեր սրբութենէն, որ ձե-զի փոխանորդ մէկ անձ մը ցուցունէք ՚ի Պոլիս․ և զայն ձեր կնքովը վաւերացեալ, որ դատաստաննե-րու մէջ ձեր տեղը իբրև վէքիլ մեր խնդրանացը և պա-հանջմանը պատասխանէ․ և կաղաչեմ, որ նոյն իրեն գիրս անյապաղ ժամ յառաջ կատարելոյ բարեհաճիք․

Փափաքս էր, որ լաւ խորհելով, թէ այն օրա-ցուցին չնչին և փոքրիկ շահը, Ձեր պատրիարքութեան [illegible] հինգ հազար ղը-ռուշ պարտքերէք չնպաստելը գիտնալով, դարձեալ մեր վնասը այս տարի ալ չէիք կրկնապատկեր․

Ու այս առթիւ ահա այժմէն ծանուցանեմ մե-ծաւ աղաչանօք, յառաջակայ 1870 թուականին օ-րացոյցը չտպել․ որով կարողացայց շնորհիւն Աստու-ծոյ հատուցանել երկամեայ կրկնակի վնասներս և ցիրեալ պարտքերս․

Մշտամ ծնրադիր և գթածնելոյ Ձեր
սպասաւոր Երեմիա քահանայ
խոստովանիչ․

1869
Յուն 28

Տէր Երեմիայի Պայմանագրէն կ՚երեւի, որ հինգ հազար ղուրուշի սակարկու-թեամբ խոստացած է օրացուցական ուսումն ուսուցանել մահտեսի Գ․ Յա-րութիւն Օխճիճեանին, որպէս զի այս եղանակաւ Ս․ Աթոռս ևս կա-րենայ օրացոյց տպագրել․ Գաղտնագրու-թեան նամակէն կ՚երեւի, որ Սրբազան Պատրիարքը ցուցած է իր մարդասի-րութիւնը Տէր Երեմիա քահանային, որով պարտաւորուած է եղեր անխա-խանձաբար ուսուցանել յիշեալ գի-տութիւնն և նուիրել միաբանու-թեանս աստեղաբաշխական հաշիւնե-րը ՚ի նշան երախտագիտութեան․ Իսկ գաղափարաբանեան թղթէն կ՚երեւի որ ծե-րունի հայր Տէր Երեմիան կը փափաքի դատ բանալ Սրբազան Պատրիարքի հետ և փաստաբան կը պահանջէ Աթոռոյս կողմէն․

Թէ որչափ երեւակայական է Տէր Երեմիայի դատը և իրաւունքը, այս իր գրութեանց հակասութենէն յայտ-նի է․ Բայց դարձեալ մի քանի խօս-քով պատասխանել աւելորդ չենք հա-մարիր․ Տէր Երեմիան դատ բանա-լու իրաւունք չունի, որովհետեւ սա-կարկեալ գումարէն աւելի դրամ ըն-դունած է Սուրբ Աթոռէս, այն է հինգ հազար ղուրուշ ինքն և հազար ղու-րուշ իր որդին Հնդկաստանի մէջ, Սուրբ Աթոռոյս կալուածերէն․ Տէր Երեմիան դատ բանալու իրաւունք չու-նի, որովհետեւ իր խոստացած ու-սումն լիովին ուսուցած չէ, ինչպէս ինքն շատ տեղ պարծենալով ասած է թէ միայն երեքտարուան օրացուցի կազմութեան գիտութիւնն ու հա-շիւներն աւանդած է․ եւ ինչպէս անցած տարի եղաւ Երուսաղէմի օ-րացոյցը քննադատելու, որոյ մէջ ե-թէ հաշուագիտական սխալներ կա-յին, ուղղակի իրեն կը վերաբերէին․

digitised by A.R.A.R.@

Տէր Երեմիան դատ վարելու իրաւունք չունի վերջապէս, որովհետեւ մեր անցած տարուան օրացոյցի կազմութիւնն Աթոռոյս միաբան արժանապատիւ Անդրէաս վարդապետի քրտնաջան աշխատանաց արդիւնքն է, ուրիշ աղբիւրներէ քաղուած, քան թէ ծերունազարդ հօր աւանդած թերակատար հաշիւներէն։ Ի՞նչ է ուրեմն Տէր Երեմիայի դատախազութեան շարժառիթը, չըգիտենք, վասն զի մարդկային գիտութենէ անհաս է, ինչպէս օրացուցական գիտութիւնն անհաս է ամեն հողեղէն արարածներէ, բաց 'ի Տէր Երեմիայէն։ Մենք Տէր Երեմիայի դատախազութեան մէջ ուրիշ իրաւունք չենք տեսներ, բայց միայն մենավաճառութեան տենչ. վասն զի Տէր հայրը կը գանգատի որ անցած տարի Աթոռոյս օրացոյցը իւր օրացուցէն առաջ տպագրուած և 'ի վաճառ հանուած է. վասն զի կը խնդրէ որ այս տարի Երուսաղէմ մը օրացոյց չըհրատարակէ։ Ինչու համար ուրեմն ինքն Ս. Աթոռոյս դրամներն առնելով խոստացած է պայմանագրով օրացուցական գիտութիւնըն ուսուցանել. մինթէ միայն իւր հանճարը ցոյց տալու համար, և կամ մինթէ լոկ Աթոռոյս միաբանից համար տպագրելու պայմանաւ, ինչպէս ինքն տարապարտ կը պնդէ։ Սորա համար ինչ հարկաւոր էր հօգնութիւն, տըպագրութիւն և ծախսարկութիւն։ Ո՞չ թէ Ս. Աթոռս տէր Երեմիային վճարած հազարաւոր ղուրուշներով չէ՞ր կարող իւր միաբանից համար տարիներով օրացոյց գնել։

Մենք խորհուրդ կը տանք Երեմիա հօրը, որ մտածէ միանգամ թէ ի՛նչքան երեւակայական է իւր իրաւունքը և որու հետ կ'ուզէ դատ բանալ։ Խորհուրդ կըտանք մանաւանդ, որ յետս կոչէ իւր վիրաւորիչ խօսքերըն, զորս ուղղած է առ Ս. Պատրիարքն և զորըս նոտր գրով նշանակած ենք իւր նամակին մէջ. վասն զի մենք չենք ուզեր, որ Երեմիա հայրն դատախազութեան իրաւունք չունենալէն զատ՝ ապերախտ գտնուի միանգամայն այն մարդասէր երախտեաց դէմ, զորս վայելած է Ս. Պատրիարքէն, ինչպէս և ինքն կը խոստովանի իւր գոհունակութեան նամակին մէջ։

Մոռացանք ասելու, որ տէր Երեմիա հայրը խիստ զայրացած է Աթոռոյս անցած տարուան օրացուցին մէջ Յովհաննու Որոտնեցւու և Գրիգոր Տաթեւացւու յիշատակութիւնն լինելուն պատճառաւ։ Տէր հօր զայրոյթը խիստ մեծ յանդիմանութիւն է իրեն համար։ Վասն զի, աստեղագիտական նրբազննին հետախուզութեամբ զբաղած լինելով, գէթ միանգամ ակնարկ չէ ձգեր Հայ պատմագրութեան վրայ, թէ ի՛նչ երախտիք ունին յիշեալ երանաշնորհ Վարդապետները Հայաստանեայց եկեղեցւոյն նկատմամբ, ի՛նչ մեծ նշանակութիւն ունեցած են իրենց ժամանակակցաց մէջ, և ի՛նչ պիսի հզօր ախոյեաններ եղած են Ունիթոռական մոլեկրօնութեան դէմ Հայաստանեայց եկեղեցւոյն պաշտպանելով. Եթէ Տէր հայրը աստեղազըննական դիտողութեան բարձրութենէն բարեհաճէր առ վայր մի Հայաստանի խոնարհ հողին նայելու՝ պիտի տեսնէր որ ամեն տեղ և ամեն եկեղեցիներու մէջ երախտագիտական տօնակատարութեամբ կը տօնուին յիշեալ վարդապետները բոլոր Հայ քրիստոնեաներէն, և ոչ ոք իշխանութիւն չունի նոցա անունը հանել եկեղեցւոյ յիշատակարանէն։

Եթէ երբեմն, միայն Պոլսոյ շըջանակին մէջ, նոցա յիշատակութիւնը և Քաղկեդոնի ժողովի ու Լեւոնի առ-

digitised by A.R.A.R.@

մարի նզովքն դադարեցուց մեր հաւոյ մէտական եղբարց միութեան համար, այս եւս աւտորինի էր, որովհետեւ Պատրիարք մի և քանի մի ժողովականք իրաւունք չունէին եկեղեցւոյ սահմանադրութիւնը փոխելու, մանաւանդ որ ժամանակը չուտով հաւատաց, որ Հռովմէականք Տօմեւացիներէն ու Լեւոնի Տոմարի և Քաղկեդոնի ժողովի նզովքէն չէին փախած, այլ բուն եկեղեցւոյ գրկէն։ Մերեմն Երեմիա հայրը, փոխանակ Աթոռոյս օրացոյցը պախարակելու, թող իւր անգիտութիւնը յանդիմանէ և բարեհաճի զէթ ներկայ տարւոյն մէջ իւր օրացուցի ամենամեծ սխալն ուղղելու, որով մեղանչած է նախնի Հարց եկեղեցական Սահմանադրութեան դէմ։

## ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ
## ԵՒ ԻՒՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ

Եղիշէ վարդապետն կրտսեր Թարգմանչաց կամ' երկրորդ աշակերտաց դասէն է, Վարդան Մամիկոնեանի ատենադպիրն, որ թէպէտ իւր գրուածոց խորագիրներուն մէջ սովորաբար վարդապետ կը կոչուի, բայց Մամիկոնեան նախարարական տան եպիսկոպոսն էր, որ և Արտաշատու ժողովի Եպիսկոպոսաց կարգին մէջ կ'անուանի Եղիշէ Եպիսկոպոս Ամատունեաց։ Հայաստանեայց աշխարհի հարստահարութեան և հալածանաց օրերուն ականատես եղաւ Եղիշէ, տեսաւ սուրբ Վարդանայ և նորա քաջ ընկերաց նահատակութիւնը, տեսաւ ընտիր ընտիր նախարարաց բանտարկութիւնը և գերութիւնը, Հայ ախոյեանց քրիստոնէական արիութիւնը. տեսաւ Հայրենեաց աւերումը պարսկական բռնութենէն, և որոնց ցաւէն առանձնացաւ Մոկաց լեռները, և այն տեղէն Աշտունեանց գաւառը, ուր և կնքեց իւր կեանքը։

Եղիշէ թողած է ինքնագիր ընտիր երկասիրութիւններ, որոց մէջ կը փայլին իւր ազնիւ զգացմունքներն ու քրիստոնէական իմաստութիւնը։ Այս երկասիրութեանց մէջ ամենէն նշանաւորն է Պատմութիւն Վարդանայ և Հայոց պատերազմին՝ զոր գրած է Մամիկոնեան Դաւիթ երիցու հայցմամբ։ Այս պատմութիւնը կը բաղկանայ մէկ ընծայականէ առ Դաւիթ Երէցն եւ ութն յեղանակներէ կամ գլուխներէ, պատմական անցից յաջորդութեան կարգաւ, որոց վերջինը տաւել սուրբ քահանայից չարչարանքները և հայ կանանց քրիստոնէական բարեպաշտութիւնները կը պարունակէ, ուստի և կը կոչուի Արդարոց եօթն յեղանակին։ Եղիշէի պատմութեան մէջ նոյնպէս կը գտնուի 1. Յազկերտի շրջաբերական հրովարտակը, որով իւր տէրութեան հպատակ ազգերը կը հրաւիրէ 'ի պատերազմ ընդդէմ Քուշանաց, 2. Միհրներսեհ հրամանատարի նամակը, զոր մոգերու խորհրդով կը գրէ Հայոց ազգին՝ նախ պարսկական դէնը բացատրելով և քրիստոնէութիւնը պախարակելով և ապա կը ստիպէ Հայոց ազգը 'ի մոգութիւն և յարեւապաշտութիւն, 3. Հայոց մերժողական պատասխանը, զոր կը գրեն Արտաշատու մէջ ժողով գումարուած եպիսկոպոսները նախարարաց և բոլոր բազմութեան հաւանութեամբ և քրիստոնէական անվեհեր ազատութեամբ, 4. Հրովարտակ կամ Գիր ողոքանաց Հայոց աշխարհին, զոր կը գրեն Յունաց Թէոդոս կայսեր և օգնութիւն կը խնդրեն, բայց Թէոդոս կը մեռանի և Մարկիանոսը թագաւորելով փոխանակ Հայոց օգնելու, ընդհակառակն կը բարեկամանայ Պարսից թագաւորի հետ և դաշնակցութիւն

digitised by A.R.A.R.@